

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների բողոքների ու
առաջարկությունների վերաբերյալ
15.07.2010թ. դրությամբ

1. Ստացվել են նամակներ
որից ընդամենը՝ 3656

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	549	16.2
դիմում	1600	43.7
բողոք	1016	27.7
կրկնակի	371	10.1
կոլեկտիվ	120	0.3

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ 914

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	610	66.7
բողոք	304	33.2

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	307	8.3
կոմունալ-կենցաղային	61	1.6
շինարարական	133	3.6
արդ.ձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	16	0.4
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	68	1.8
առողջապահության		
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	1144	31.2
օրենսդրական	29	0.7
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	83	2.2
ապարատային		
այլ հարցեր	1797	49.1
սեփականաշնորհում	18	0.4

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2010թ. ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 3656 նամակներից մոտ 16.2%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 27.7%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 66.7%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 31.2%-ն անընչվում է ֆինանսական հարցերին, մոտ 2.2%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում, ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները բաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումների (որոնք հիմնական մասն են կազմում).

- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումների:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 8.3%-ն առնչվում է բնակարանային, 1.6%-ը կոմունալ-կենցաղային, 3.6%-ը՝ շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 49.1%-ը դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 3234-ին տրվել է գրավոր, իսկ 372-ին՝ բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 50-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն